



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3 մայիսի 2021 թվական

ք.Երևան

- I. Գործերի դատավարական նախապատմությունը.....2
- II. Ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.....3
- III. Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.....4
- Ա. Գործերի ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման լիազորության համատեղելիությունը Վճռաբեկ դատարանի նախագահի իրավական կարգավիճակի և բացառապես ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կողմից արդարադատության գործառնություն իրականացնելու պահանջի հետ.....6
- Բ. Արդար դատաքնության իրավունքի երաշխիքների պաշտպանությունն ու դատական մարմինների միջև գործառնության կապի ապահովումը Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման ընթացակարգի պայմաններում.....23
- Գ. Դատավորի մասնագիտացման սկզբունքի ապահովումը Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման լիազորության համատեքստում.....33
- IV. Միջնորդություն՝ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ38
- V. Միջնորդություն՝ միջանկյալ միջոց կիրառելու և վիճարկվող նորմերի իրավական գործողությունը կասեցնելու վերաբերյալ.....41
- VI. Միջնորդություն՝ գործի քննությունը հրատապության կարգով իրականացնելու վերաբերյալ.....44

ուսումնասիրելով թիվ ԼԴ/1385/02/19, ԱՐԱԴ/0327/02/21 և ՎԴ/3461/05/20 գործերով ընդդատության և ենթակայության մասին վեճերը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ ՀՀ սնանկության դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 20-ի, Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 19-ի և Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 27-ի որոշումները,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

I. Գործերի դատավարական նախապատմությունը.

1. Թիվ ԼԴ/1385/02/19 քաղաքացիական գործը՝ ըստ հայցի Հրաչիկ Ղամբարյանի ընդդեմ «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ի, Արտակ Ղազարյանի, երրորդ անձինք՝ ՀՀ Վանաձոր նոտարական տարածքի նոտար Արուսյակ Ազարյանի, ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի Վանաձորի տարածքային ստորաբաժանման՝ գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանք կիրառելու պահանջի մասին, Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի մարտի 26-ի որոշմամբ ըստ ենթակայության ուղարկվել է ՀՀ սնանկության դատարան:

ՀՀ սնանկության դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ քաղաքացիական գործն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ ընդդատության (ենթակայության) հետ կապված վեճը լուծելու խնդրանքով:

Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի ապրիլի 26-ին:

2. Թիվ ԱՐԱԴ/0327/02/21 քաղաքացիական գործը՝ ըստ հայցի «Արդշինբանկ» ՓԲԸ-ի ընդդեմ Մեսրոպ Հովակիմյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի մարտի 25-ի որոշմամբ ըստ ընդդատության ուղարկել է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ քաղաքացիական գործն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ ընդդատության հետ կապված վեճը լուծելու խնդրանքով:

Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի ապրիլի 27-ին:

3. Թիվ ՎԴ/3461/05/20 վարչական գործը՝ ըստ հայցի Արեգ Կարապետյանի ընդդեմ Երևանի քաղաքապետի՝ 2020 թվականի ապրիլի 10-ի թիվ 1413-Ա որոշման 2-րդ կետն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ 2020 թվականի ապրիլի 13-ի թվականի թիվ 1423-Ա որոշումն անվավեր ճանաչելու, Երևանի քաղաքապետին 2020 թվականի փետրվարի 12-ի թիվ 444-Ա որոշման պայմաններին համապատասխան նոր մրցույթ հայտարարելուն և անցկացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ՀՀ վարչական դատարանի՝ 2021

թվականի մարտի 24-ի որոշմամբ ըստ ենթակայության ուղարկվել է (վերահասցեագրվել է) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ վարչական գործն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ ենթակայության հետ կապված վեճը լուծելու խնդրանքով:

Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի ապրիլի 29-ին:

II. Ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

4. Թիվ ԼԴ/1385/02/19 քաղաքացիական գործով Մնանկության դատարանը, հղում կատարելով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածին, ինչպես նաև վերլուծելով մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը գործող օրենսդրական կարգավորումների և դրանից հետո ուժի մեջ մտած՝ ««Մնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն օրենքի անցումային կարգավորումների պայմաններում սնանկության գործերի վարման գործընթացի առանձնահատկությունները՝ գտել է, որ տվյալ քաղաքացիական գործը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, պետք է ուղարկվել ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ գործի ենթակայությունը որոշելու համար¹:

5. Թիվ ԱՐԱԴ/0327/02/21 քաղաքացիական գործով Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ, 22-րդ, 25-րդ, 296-րդ, 299-րդ հոդվածներին, ինչպես նաև վերլուծելով քաղաքացիական դատավարությունում գործի քննությունը պարզեցված վարույթի կարգով իրականացնելու դեպքում գործն այլ դատարանի քննությանը հանձնելու պայմանները՝ 2021 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ գտել է, որ տվյալ դեպքում առկա չէ օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն գործն այլ դատարանի քննությանը հանձնելու հիմքը²:

¹ Տե՛ս թիվ ԼԴ/1385/02/19 գործի նյութերը, թերթեր 87-95:

² Տե՛ս թիվ ԱՐԱԴ/0327/02/21 գործի նյութերը, թերթեր 41-43:

6. Թիվ ՎԴ/3316/05/20 վարչական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը, հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ, 24-րդ հոդվածներին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ, 26-րդ հոդվածներին, 2021 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ գտել է, որ Վարչական դատարանի հետ առկա է վեճ՝ գործի ենթակայության վերաբերյալ³:

III. Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

7. Ընդդատության և ենթակայության մասին վեճերը լուծելիս Վճռաբեկ դատարանի նախագահը փաստացի հանդես է գալիս որպես միանձնյա կարգով գործը (վեճը) քննող (լուծող) վերադաս դատական ատյան և այդ հարցով ուղղակիորեն իրականացնում է դատարանին բնորոշ գործառույթ՝ լուծելով առաջացած վեճը և որոշելով, թե ո՞ր դատարանն է հանդես գալիս որպես գործի քննությունն իրականացնող պատշաճ սուբյեկտ և արդար դատաքննության սահմանադրական հիմնարար իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարան:

8. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության սրացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

2. Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

3. Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

4. Սույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև վարչական կամ անանկության դատարանի կողմից համապատասխանաբար վերահասցեագրված հայցադիմումի կամ հանձնված գործի նկատմամբ»:

³ Տե՛ս թիվ ՎԴ/3461/05/20 գործի նյութերը, թերթեր 124-126:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ սրանալու դեպքում դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը: Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան»:

8.1. Տվյալ գործերով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Մնանկության մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ կարգավորումների կիրառմամբ Մնանկության և ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների կողմից բարձրացված՝ ընդդատության և ենթակայության մասին վեճերը լուծելու և նույն կարգավորումների իմաստով գործերը քննելու «իրավասու դատարանը» որոշելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին ուղղակիորեն պետք է իրականացնի այդ վեճերը լուծող վերադաս դատական ատյանին բնորոշ լիազորություններ և փաստացի գործի որպես դատարան:

Ուստի, Վճռաբեկ դատարանի նախագահի կարգավիճակով տվյալ գործերի շրջանակներում հանդես գալով որպես դրանց ընդդատության և ենթակայության մասին վեճերը միանձնյա կարգով լուծող «վերադաս դատական ատյան», որը նաև լիազորված է կայացնելու ըստ էության վերջնական իրավական ակտեր՝ որոշելով այդ գործերի հետագա քննությունն իրականացնող իրավասու դատարաններին, ըստ այդմ՝ նաև ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասում օգտագործվող՝ «դատարաններ» հասկացության ինքնավար իմաստով⁴ հանդես գալով որպես ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտ⁵՝ գտնում են, որ ՀՀ

⁴ «Դատարան» հասկացությունն ընկալվում է տվյալ եզրույթի բովանդակային իմաստով՝ բնորոշվելով որպես իր իրավասության շրջանակում իրավական նորմերի հիման վրա և սահմանված կարգով իրականացված ընթացակարգերի արդյունքում համապատասխան հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործառնությունով օժտված մարմին, *mutatis mutandis*, տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Belilos v. Switzerland* գործով 1988 թվականի ապրիլի 29-ի վճիռը, գանգատ թիվ 10328/83, կետ 64:

⁵ ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասում օգտագործվող՝ «Դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով» ձևակերպման առումով, *mutatis mutandis*, տե՛ս նաև Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 4-ի թիվ ՍԴՈ-934 որոշման 6-րդ կետը, որտեղ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 101-դ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում օգտագործվող «իր վարույթում գտնվող կոնկրետ գործով» ձևակերպմանը, արտահայտել է իրավական

քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի և «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի կապակցությամբ առկա է սահմանադրականության խնդիր: Ուստի անհրաժեշտ են համարում դիմել ՀՀ Սահմանադրական դատարան (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան)՝ նշված նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով՝ գնահատման ենթարկելով՝

- գործերի ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման լիազորության համատեղելիությունը Վճռաբեկ դատարանի նախագահի իրավական կարգավիճակի և բացառապես ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կողմից արդարադատության գործառույթ իրականացնելու պահանջի հետ,

- արդար դատաքնության իրավունքի երաշխիքների պաշտպանությունն ու դատական մարմինների միջև գործառութային կապի ապահովումը Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման ընթացակարգի պայմաններում,

- դատավորի մասնագիտացման սկզբունքի ապահովումը Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման լիազորության համատեքստում:

Ա. Գործերի ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման լիազորության համատեղելիությունը Վճռաբեկ դատարանի նախագահի իրավական կարգավիճակի և բացառապես ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կողմից արդարադատության գործառույթ իրականացնելու պահանջի հետ.

9. Սույն գործով Սահմանադրական դատարանի առջև բարձրացվող *սուսջին* իրավական հարցը հետևյալն է. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով և «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ գործերի ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման լիազորությունն արդյո՞ք բխում է Վճռաբեկ դատարանի նախագահի՝ որպես Վճռաբեկ դատարանի ներկայացուցչական և կազմակերպչական բնույթի լիազորություններով օժտված սուբյեկտի իրավական

դիրքորոշում առ այն, որ «իր վարույթ» հասկացության առավել լայն մեկնաբանությունը ենթադրում է, որ վերջինս վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ տվյալ փուլում այդ գործով վերջնական իրավական ակտ ընդունելու իրավասությամբ օժտված է հենց այդ մարմինը:

կարգավիճակից և չի վտանգում արդյո՞ք բացառապես ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դատարանների կողմից արդարադատության գործառույթ իրականացնելու պահանջը:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»*:

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»*:

ՀՀ Սահմանադրության 162-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:*

2. Արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է»:

ՀՀ Սահմանադրության 163-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են սրեղծվել մասնագիտացված դատարաններ:*

2. Արտակարգ դատարանների սրեղծումն արգելվում է»:

10.1. Սահմանադրական դատարանը դատավորների, դատարանների նախագահների, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի նախագահի իրավական կարգավիճակի մասին արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- 2007 թվականին ընդունված ՀՀ դատական օրենսգրքի խմբագրության պայմաններում, Սահմանադրական դատարանը նշել է, որ այդ օրենսգրքի մի շարք հոդվածների համաձայն՝ ընդհանուր իրավասության, քաղաքացիական, քրեական, վարչական, վերաքննիչ դատարանների նախագահների, ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի անմիջական պարտականությունն **այդ դատարանների բնականոն գործունեությունն ապահովելը և դատավորի կողմից նրա անմիջական պարտականությունների կատարմանը հետևելն է**

(25, 30, 34, 38, 49 և 61 հոդվածներ), ընդ որում, դատարանների նախագահների այդ պարտականության ոչ պատշաճ իրականացումը, նույն օրենսգրքի 165 հոդվածի 1-ին մասի համաձայն, նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է⁶,

- Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից դատավորներին գործողելու վերաբերյալ 2007 թվականին ընդունված ՀՀ դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելիս Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենքը չի կարող վճռաբեկ դատարանի նախագահին լիազորել կասեցնել կոնկրետ դատարանի դատավոր նշանակելու վերաբերյալ ՀՀ Նախագահի հրամանագրի գործողությունը՝ թեկուզ ժամանակավորապես:

2007 թվականին ընդունված ՀՀ դատական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը սահմանում էր՝ *«Վճռաբեկ դատարանի նախագահը ապահովում է վճռաբեկ դատարանի քննական գործունեությունը»*: Նույն հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետը նաև նախատեսում էր, որ՝ *«Վճռաբեկ դատարանի նախագահը իրականացնում է օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ»*: Նշված երկու նորմերի համադրված վերլուծության արդյունքներով Սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ դատական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի ուժով **օրենքով վճռաբեկ դատարանի նախագահին կարող են վերապահվել այնպիսի լիազորություններ, որոնք իրենց բնույթով չեն հակասում օրենքով և, մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասով վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված մյուս լիազորություններին⁷:**

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):»*:

11.1. Վերոնշյալ դրույթի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

⁶ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՍԴՌ-719 որոշումը, կետ 7:

⁷ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ ՍԴՌ-782 որոշումը, կետեր 6, 11, տե՛ս նաև ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ՍԴՌ-786 որոշումը, կետ 5:

- Դատավորների անկախության համար պահանջվում է, որ առանձին դատավորներն ազատ լինեն ինչպես արտաքին, այնպես էլ դատական համակարգի ներսից բխող անհարկի ազդեցությունից: Դատական համակարգի ներսում անկախության համար պահանջվում է, որ դատավորներն ազատ լինեն գործընկեր դատավորների կամ դատարանում վարչական գործառույթներ իրականացնող անձանց, օրինակ՝ դատարանի նախագահի կամ դատարանի ստորաբաժանման նախագահի հրահանգներից կամ ճնշումից⁸,

- Արտաքին տպավորությունը նույնպես կարող է նշանակություն ունենալ՝ պարզելու համար, թե արդյոք տվյալ դատարանը կարող է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն «անկախ» համարվել: Կարևորն այն է, որ ժողովրդավարական հասարակությունում դատարանները պետք է վստահություն ներշնչեն հանրությանը, իսկ կոնկրետ գործով քրեական վարույթի դեպքում՝ նախևառաջ մեղադրյալին⁹:

12. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հայաստանի Հանրապետությունում արդարադատություն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:*

2. Արդարադատություն իրականացնելիս հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ *«Դատարանների գործունեությունը պետք է կազմակերպվի այնպես, որ ապահովվի յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանությունը՝ օրենքի հիման վրա սրեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության միջոցով»:*

⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Parlov-Tkalcic v. Croatia* գործով 2009 թվականի դեկտեմբերի 22-ի վճիռը, զանգատ թիվ 24810/06, կետ 86:

⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Sahiner v. Turkey* գործով 2001 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, զանգատ թիվ 29279/95, կետ 44:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Ի լրումն Վճռաբեկ դատարանի պալատի դատավորի լիազորությունների՝ Վճռաբեկ դատարանի նախագահը՝*

- 1) ապահովում է Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեությունը, ներառյալ վերահսկում է վճռաբեկ դատարանի աշխատակազմի գործունեությունը.*
- 2) Վճռաբեկ դատարանի դատավորներին տրամադրում է արձակուրդ.*
- 3) ներկայացնում է Վճռաբեկ դատարանը այլ մարմինների հետ հարաբերություններում.*
- 4) Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեության ապահովման հետ կապված հարցերով դիմում է Բարձրագույն դատական խորհուրդ, Ընդհանուր ժողով և Ընդհանուր ժողովի հանձնաժողովներ.*
- 5) Վճռաբեկ դատարանի դատավորի, այդ թվում՝ պալատի նախագահի կողմից դատավորի վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելիս այդ մասին համապատասխան հաղորդում է ներկայացնում Կարգապահական հարցերի հանձնաժողով.*
- 6) իրականացնում է այլ լիազորություններ»:*

13. Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ 2010 թվականի Կիևյան հանձնարարականների (այսուհետ՝ նաև Կիևյան հանձնարարականներ) համաձայն՝ դատարանների նախագահների դերը պետք է խստորեն սահմանափակված լինի հետևյալ իմաստով. նրանք պետք է ստանձնեն միայն այնպիսի դատական գործառույթներ, որոնք համարժեք են դատարանի այլ անդամների կողմից իրականացվող գործառույթներին: Դատարանի նախագահը չպետք է միջամտի այլ դատավորների կողմից դատական որոշումների կայացմանը և չպետք է մասնակցի դատավորների ընտրությանը: Նրանք կարող են ունենալ ներկայացուցչական և վարչական, այդ թվում՝ ոչ դատական աշխատողների նկատմամբ հսկողության գործառույթներ¹⁰:

14. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն դատավորների մասին (անկախություն, արդյունավետություն և պատասխանատվություն) թիվ CM/Rec(2010)12 հանձնարարականում դատավորների ներքին անկախության համատեքստում նշել է, որ

¹⁰ Տե՛ս Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ 2010 թվականի Կիևյան հանձնարարականները, կետ 11:

դատական հիերարխիկ միջամտությունը դատական գործառնությունների իրականացման նկատմամբ անթույլատրելի է¹¹:

15. Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը (այսուհետ՝ նաև ԵԴԽԽ) «Դատարանների նախագահների դերի մասին» թիվ 19 (2016) կարծիքում նշել է, որ դատարանների նախագահներն առանցքային դեր են կատարում դատարանները ներկայացնելու հարցում: ԵԴԽԽ անդամների կողմից անդամ պետություններում տիրող իրավիճակի մասին տրամադրված տեղեկատվության համաձայն՝ նախագահների այս գործառնությունն առավել մեծ կարևորություն է ստանում: Այս գործընթացում դատարանների նախագահները նպաստում են դատական ամբողջ համակարգի զարգացմանը, ինչպես նաև իրենց դատարաններում արդարադատության որակի պահպանմանը և որակյալ արդարադատության իրականացմանը, որի ընթացքում ապահովվում է անկախությունը: Ընդհանուր առմամբ՝ դատարանների նախագահները դերակատարում ունեն այլ մարմինների և ինստիտուտների հետ հարաբերություններ պահպանելու և զարգացնելու հարցում¹²:

Նույն կարծիքում ԵԴԽԽ-ն ընդգծել է, որ՝

- դատարանների նախագահների հիմնական պարտականությունը, սակայն, մնում է որպես դատավորների և, ընդհանուր առմամբ, նաև դատարանի անկախության ու անաչառության երաշխավոր հանդես գալը¹³,

- դատարանների նախագահները, որոնք հանդիսանում են դատարանի անկախության, անաչառության և արդյունավետության երաշխավորներ, իրենք պետք է հարգեն դատարաններում դատավորների ներքին անկախությունը¹⁴,

- առանցքային կարևորություն ունի այն, որ դատարանների նախագահները կառավարեն դատարանները դատական իշխանության հիմնարար սկզբունքներին համապատասխան¹⁵:

¹¹ Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ դատավորների մասին (անկախություն, արդյունավետություն և պատասխանատվություն) 2010 թվականի նոյեմբերի 17-ի թիվ CM/Rec(2010)12 հանձնարարականը, կետեր 30-31:

¹² Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ «Դատարանների նախագահների դերի մասին» թիվ 19 (2016) կարծիքը, կետ 7:

¹³ Տե՛ս նույն տեղում:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, կետ 13:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, կետ 14:

Միաժամանակ, նույն կարծիքում ԵԴԽԽ-ն նաև ընդգծել է այն պնդումը, որ պետք է խուսափել սահմանափակ թվով մարդկանց ձեռքում գործառույթների և իրավասությունների կենտրոնացումից¹⁶:

16. «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով), անդրադառնալով դատավորների ներքին անկախությանը, նշել է, որ դատական համակարգում ներքին անկախության խնդիրը միջազգային փաստաթղթերով արժանացել է առավել քիչ ուշադրության, քան արտաքին անկախությունը: Դատական համակարգի հիերարխիկ կազմավորումը ենթակայության իմաստով դատարանների նախագահներին կամ բարձր աստիճաններին իրենց դատական որոշումների կայացման գործունեության ընթացքում, կլինի այդ սկզբունքի խախտում¹⁷:

Դատավորների գնահատման համակարգի ներդրման առումով 2007 թվականի՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ կարծիք ներկայացնելիս, Վենետիկի հանձնաժողովը հստակ արձանագրել և կարևորել է Հայաստանում դատական համակարգի անկախության ապահովումը նաև դատական համակարգի ներսում՝ նպաստելով անկախության երաշխավորմանը նաև այլ դատավորների միջամտությունից¹⁸:

Դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետի առումով 2007 թվականի՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի¹⁹ վերաբերյալ կարծիք ներկայացնելիս, Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ որոշում անմիջականորեն չկայացնող դատական պաշտոնների ընտրության, պաշտոնավորման ժամկետի և պաշտոնավարման դադարեցման հետ կապված իրավական կանոնները պետք է պահպանեն և ամրապնդեն դատական համակարգի անկախությունը: Համակարգը պետք է խոչընդոտի դատարանի նախագահի պաշտոնի

¹⁶ Տե՛ս նույն տեղում, կետ 8:

¹⁷ Տե՛ս Report on the Independence of the Judicial System Part I: The Independence of Judges, CDL-AD(2010)004, կետեր 72-74 և 82:

¹⁸ Տե՛ս Joint Opinion on the Draft Law on Introducing Amendments and Addenda to the Judicial Code of Armenia (Evaluation System for Judges), CDL-AD(2014)007, 24 March 2014, կետեր 11-19, 126-127:

¹⁹ Տե՛ս [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-REF\(2014\)016-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-REF(2014)016-e) հղումը:

քաղաքականացմանը և պաշտպանի դատավորին դատարանի նախագահի վարչական ներգործությունից²⁰:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի վերաբերյալ կարծիքում անդրադառնալով դատարանների նախագահների նոր կարգավիճակի և լիազորությունների վերաբերյալ կարգավորումներին՝ Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ դրանք ընդհանուր առմամբ ընդունելի են: Որպես դիտարկում Վենետիկի հանձնաժողովը դիրքորոշում է հայտնել, որ **դատարանների նախագահների դերի էական նվազեցումը դրական միտում է, նոր համակարգն առավել պակաս հիերարխիկ է և կենտրոնացված, ուստի առավել նպաստավոր է ներքին դատական անկախության մշակույթը զարգացնելու համար**²¹:

17. Սույն որոշման 10-16-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, միջազգային չափանիշների, իրավական դիրքորոշումների լույսի ներքո պետք է արձանագրել, որ դատարանների նախագահները, բացի որպես դատավոր գործառույթներ իրականացնելուց, ի պաշտոնե հանդես են գալիս նաև որպես կառավարչական (*managerial*) գործառույթներ իրականացնող սուբյեկտներ: Ապահովելով դատական համակարգի ներքին անկախության սկզբունքը, բացառելով դատական համակարգի ներսում ենթակայության հարաբերությունները և երաշխավորելով դատավորների անկախությունը նաև դատարանի նախագահից՝ նշված կառավարչական գործառույթները կազմում են դատարանների նախագահների իրավական կարգավիճակի բաղկացուցիչ մասը, ունեն բացառապես ընթացակարգային, արարողակարգային (*ceremonial*) բնույթ:

Այդպիսի ընթացակարգային, արարողակարգային բնույթի գործառույթներն ընդհանուր առմամբ դրսևորվում են գործունեության հետևյալ երկու լրացուցիչ ուղղություններում.

- **ներկայացուցչական**, որի շրջանակներում դատարանի նախագահը ներկայացնում է **տվյալ դատարանն** այլ մարմինների հետ հարաբերություններում: Այն ներառում է տվյալ դատարանի հեղինակության ամրապնդմանն ու զարգացմանն ուղղված ներկայացուցչության ապահովումն ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մարմինների հետ

²⁰ Տե՛ս Opinion on the Draft Law on Introducing Amendments and Addenda to the Judicial Code of Armenia (Term of Office of Court Presidents), CDL-AD(2014)021, 16 June 2014, կետ 17:

²¹ Տե՛ս Opinion on the draft Judicial Code, CDL-AD(2017)019, 9 October 2017, կետ 50:

հարաբերություններում, այդ դատարանի դատավորների և աշխատակազմի բնականոն գործունեությանը հնարավոր խոչընդոտ ներկայացնող խնդիրների բարձրաձայնումը,

- **կազմակերպչական**, որի շրջանակներում դատարանի նախագահը կազմակերպում է **տվյալ դատարանի** բնականոն գործունեությունը: Այն ներառում է տվյալ դատարանի դատավորների և դատարանի աշխատակազմի համակարգման լիազորությունները՝ ուղղված դատարանի աշխատանքների իրականացմանը հնարավոր խոչընդոտ ներկայացնող խնդիրների օպերատիվ և արդյունավետ լուծմանը:

18. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո պետք է արձանագրել, որ բացի արդարադատության իրականացմանը որպես դատավոր մասնակցելուց, Վճռաբեկ դատարանի նախագահի իրավական կարգավիճակը սահմանափակված է բացառապես ընթացակարգային, արարողակարգային բնույթ ունեցող գործառույթներով, որոնք ներառում են Վճռաբեկ դատարանի ներկայացուցչական և կազմակերպչական լիազորությունների իրականացումը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի նախագահն ի պաշտոնե լիազորված է՝ ա) ներկայացնել Վճռաբեկ դատարանն այլ ներպետական և միջազգային մարմինների հետ հարաբերություններում և բ) կազմակերպել Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեությունը:

18.1. Վերոնշյալի համատեքստում հարկ է նկատել, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո ներդրված լուծումների արդյունքում, դատարանների նախագահների, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի նախագահի ազդեցությունը դատական համակարգի ներսում էապես նվազել է: Մասնավորապես, **եթե մինչև սահմանադրական փոփոխությունները Վճռաբեկ դատարանի նախագահը, ի պաշտոնե լինելով նաև ՀՀ արդարադատության խորհրդի նախագահը, իր ունեցած կարգավիճակով և լիազորություններով ասոցացվում էր ոչ միայն որպես Վճռաբեկ դատարանի, այլև ամբողջ դատական համակարգի բնականոն գործունեության ապահովման համար պատասխանատու սուբյեկտի հետ, ապա սահմանադրական փոփոխություններից հետո, Վճռաբեկ դատարանի նախագահը, ինչպես յուրաքանչյուր դատարանի նախագահ, պատասխանատու է այդ դատարանի, կոնկրետ դեպքում՝ Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեության համար:** Այս առումով պետք է նշել, որ թեև 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության և 2007 թվականի՝ ՀՀ դատական

օրենսգրքի կարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբանությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի անմիջական պարտականությունը Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեությունն ապահովելը և դատավորի կողմից անմիջական պարտականությունների կատարմանը հետևելն էր²², սակայն այդ ակտերով վերապահված ընդարձակ լիազորությունների շնորհիվ Վճռաբեկ դատարանի նախագահը, առնվազն անկողմնակալ դիտորդի տեսանկյունից, ընկալվում էր որպես ամբողջ դատական համակարգի բնականոն գործունեության համար պատասխանատու սուբյեկտ: Այդ պատճառով, 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների շրջանակներում հայեցակարգային հիմունքներից էր դատական իշխանության գործառնության ամբողջականության ապահովումը՝ ուղղված նաև դատական իշխանության ներքին անկախությամբ օժտված համակարգի ձևավորմանը²³, որի առաջնային պայմաններից էր դատական համակարգի ներսում ընդհանրապես՝ դատարանների նախագահների, և մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի նախագահի իրավական կարգավիճակից բխող ազդեցության նվազեցումը: Ուստի, ինչպես նշված է սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամների կողմից 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության համառոտ պարզաբանումներում, Սահմանադրությունը որդեգրել է այն ելակետային մոտեցումը, որ դատարանների նախագահներն առաջին հերթին դատավորներ են, ինչպես մյուս բոլոր դատավորները, **միայն այն տարբերությամբ, որ նրանց, ի հավելումն դատավորի բուն գործառնությունների, վերապահված են կազմակերպչական գործառնություններ**²⁴:

Արդյունքում, սահմանադրի կողմից ներդրված լուծումներով և որդեգրված քաղաքականությամբ, երբ Վճռաբեկ դատարանի նախագահը դադարեց լինել ըստ էության դատական համակարգի բնականոն գործունեությունն ապահովող՝ ՀՀ արդարադատության խորհրդի նախագահ, սահմանափակվեց նրա պաշտոնավարման ժամկետի տևողությունը, վերանայվեց նրա ընտրության կարգը, էապես փոփոխության ենթարկվեց նաև Վճռաբեկ դատարանի նախագահի իրավական կարգավիճակի բովանդակությունը: Մասնավորապես,

²² Տե՛ս սույն որոշման 10.1-րդ կետը:

²³ Տե՛ս ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից մշակված՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը, 2014թ., Երևան, էջ 38:

²⁴ Տե՛ս Վ.Պողոսյան, Ն.Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016թ., «Տիգրան Մեծ» հրատ., էջ 134:

նպատակ հետապնդելով անկողմնակալ դիտորդի տեսանկյունից նվազեցնել Վճռաբեկ դատարանի նախագահի դերը դատական համակարգի ներսում և խթանել ներքին անկախության ապահովման սկզբունքը՝ սահմանադրական նոր լուծումներով Վճռաբեկ դատարանի նախագահի իրավական կարգավիճակն ըստ էության հավասարեցվեց մյուս դատարանների նախագահների իրավական կարգավիճակին՝ սահմանափակվելով միայն ընթացակարգային, արարողակարգային բնույթ ունեցող գործառնություններով:

Այդ մասին է վկայում նաև Սահմանադրական փոփոխությունների հիման վրա մշակված նոր՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի ընդունման հիմքում ընկած գաղափարախոսության ուսումնասիրությունը: Այսպես, ՀՀ Ազգային ժողովում հիմնական զեկուցող՝ ՀՀ արդարադատության նախարարի կողմից «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքը ներկայացնելիս նշվել է. *«(...) Այս օրենսգիրքը չի սահմանափակվել զուր արտաքին անկախությամբ, այլ նաև քննարկման առարկա ենք դարձրել ներքին անկախությունը, որը թերևս ամենակարևոր տարրն էր: (...) [Դատարանների նախագահների լիազորությունները] սահմանափակվել են զուր դատարանի բնականոն գործունեությունն իրականացնելու հարցերով, ինչպես նաև դատարանն այլ մարմինների հետ հարաբերություններում ներկայացնելու հարցերով: Ավելին, եթե Վճռաբեկ դատարանի նախագահը նախկինում դիմում էր որպես դատական իշխանության ներկայացուցիչ, դատարանների ներկայացուցիչ, տվյալ պարագայում ընդամենը նա ներկայացնելու է վճռաբեկ դատարանն այլ մարմինների հետ հարաբերություններում(...)»²⁵:*

18.2. Վերոնշյալի լույսի ներքո անդրադառնալով 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրության մեջ որդեգրված լուծումները կանոնակարգող «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի կարգավորումներին՝ հարկ է նկատել, որ 33-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված՝ Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորություններն ունեն բացառապես ներկայացուցչական և կազմակերպչական բնույթ՝ սահմանափակվելով Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեության ապահովմամբ, Վճռաբեկ դատարանի դատավորներին արձակուրդի

²⁵ Տե՛ս ՀՀ Ազգային ժողովի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի նիստի ընթացքում «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքը ներկայացնելիս հիմնական զեկուցող՝ ՀՀ արդարադատության նախարար Դ.Հարությունյանի ելույթը (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.youtube.com/watch?v=kbtI4_EtWjQ&t=1137s, 01:04:15 րոպեից):

տրամադրմամբ, Վճռաբեկ դատարանն այլ մարմինների հետ հարաբերություններում ներկայացմամբ, Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեության ապահովման հետ կապված հարցերով Բարձրագույն դատական խորհուրդ, Ընդհանուր ժողով և Ընդհանուր ժողովի հանձնաժողովներ դիմումների ներկայացմամբ, Վճռաբեկ դատարանի դատավորի, այդ թվում՝ պալատի նախագահի կողմից դատավորի վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելիս այդ մասին համապատասխան հաղորդման ներկայացմամբ՝ Կարգապահական հարցերի հանձնաժողով:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ թեև 33-րդ հոդվածի 2-րդ մասում Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունները թվարկված են ոչ սպառիչ՝ նշելով, որ նա իրականացնում է նաև այլ լիազորություններ, սակայն այդ կարգավորումը մեկնաբանելիս պետք է ելնել սույն որոշման մեջ վկայակոչված՝ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-782-րդ և ՍԴՈ-786-րդ որոշումներում ամրագրված այն մոտեցումից²⁶, որ Վճռաբեկ դատարանի նախագահի «այլ լիազորություններն» իրենց բնույթով չպետք է հակասեն օրենքով և, մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով Վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված մյուս լիազորություններին:

Ավելին, հարկ է ընդգծել, որ իրավական նորմի մեկնաբանման վերոնշյալ մոտեցումը համապատասխանում է նաև «*ejusdem generis*» կոնտեքստուալ իրավամեկնաբանման հնարքին, որը վերաբերում է բաց թվարկում պարունակող կարգավորումներին²⁷: Դրա էությունն այն է, որ բաց թվարկման չորոշակիացված տարրի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է ելնել որոշակիացված տարրի բովանդակությունից: Անորոշ տարրը պետք է կրի այն ընդհանուր հատկանիշները, որոնք բնորոշ են որոշակիացված տարրերին: Այլ կերպ՝ անորոշ տարրը և որոշակիացված տարրերը պետք է համասեռ լինեն²⁸: **Նշված իրավամեկնաբանման հնարքը կիրառելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 33-րդ**

²⁶ Տե՛ս սույն որոշման 10.1-րդ կետը:

²⁷ Իրավամեկնաբանման այս հնարքի մասին առավել մանրամասն՝ տե՛ս Scalia Scalia, A., & Garner, B. A. (2012). Reading law: The interpretation of legal texts:

²⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, ընդհանուր գիտական խմբ. Ա.Մկրտումյանի, Դ.Ավետիսյանի, Վ.Ենգիբարյանի, Ռ.Մելիքյանի, Երևան, «Աստղիկ» հրատ., 2011թ., էջ 20:

հողվածի 2-րդ մասով Վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված լիազորությունների ցանկի նկատմամբ՝ պարզ է դառնում, որ Վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված «այլ լիազորություններն» իրենց բնույթով պետք է օժտված լինեն նույն հողվածի 2-րդ մասի 1-ից 5-րդ կետերում թվարկված լիազորությունների ընդհանուր հատկանիշով, այն է՝ ունենան ներկայացուցչական կամ կազմակերպչական բնույթ:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ պետք է արձանագրել, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով սկիզբ դրված դատաիրավական բարեփոխումներով և դրան համապատասխան՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում որդեգրված լուծումներով՝ ուղղված դատարանների ներքին անկախության ապահովմանը, Վճռաբեկ դատարանի նախագահը, ի լրումն արդարադատության իրականացման իր հիմնական գործառույթի, օժտված է նաև բացառապես Վճռաբեկ դատարանի ներկայացուցչական և կազմակերպչական բնույթի լիազորություններով:

19. Գործող օրենսդրական կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2015 թվականի ՀՀ սահմանադրական փոփոխություններից հետո, Վճռաբեկ դատարանի նախագահի իրավասությանն է թողնված գործերի ընդդատության և ենթակայության հետ կապված վեճերի լուծումը:

Այս առումով, հարկ է ուշադրություն դարձնել, որ ո՛չ 1964 թվականի²⁹, ո՛չ էլ 1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման ընթացակարգ նախատեսված չէր, և տասնամյակներ շարունակ, պատշաճ ընթացակարգով, առանց ենթակայության և ընդդատության հետ կապված հարցերով դատավորների միջև վեճերի նախաձեռնման, իրականացվում էր քաղաքացիական գործերի քննությունը: **Մինչդեռ 2018 թվականին ընդունված քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքով նախատեսվեց այդպիսի ընթացակարգ՝ ի հակադրումն 2015 թվականի ՀՀ սահմանադրական փոփոխությունների հիմքում ընկած գաղափարախոսության:** Ընդ որում, նոր օրենսգրքի հիմնավորումներից հետևում է, որ ընդդատության հետ կապված

²⁹ Տե՛ս 1964 թվականի հունիսի 4-ին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը՝ www.arlis.am կայքի հղմամբ:

վեճերի լուծման ընթացակարգի նախատեսումն օրենսգրքի հիմնական նորամուծություններից է ³⁰ : Սակայն, նշված նորմատիվ իրավական ակտի մշակման աշխատանքների (*travaux preparatoires-ի*) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն օրենսգրքի սկզբնական տարբերակում նախատեսված կարգավորման, որը նաև ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ, երբ ընդդատության հետ կապված վեճերը նախատեսվում էր լուծել Վճռաբեկ դատարանի երեք դատավորի կազմով, օրենսգրքի երկրորդ ընթերցմամբ ընդունված տարբերակում այդ կարգավորումը խմբագրվել է, և նախատեսվել է ընդդատության և ենթակայության հետ կապված վեճերի լուծման միանձնյա ընթացակարգ՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից³¹: Արդյունքում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսվել է, որ գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը: Նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը: Ընդ որում, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նույն հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

Բացի այդ, 2019 թվականի հոկտեմբերի 23-ին ընդունված՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 4-րդ մասում կատարվեց լրացում, որով Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման շրջանակն էապես ընդարձակվեց՝ ներառելով նաև վարչական կամ սնանկության մասնագիտացված դատարանների կողմից ընդհանուր իրավասության դատարանին վերահասցեագրված հայցադիմումի կամ հանձնված գործերի դեպքում ընդդատության և ենթակայության հետ կապված վեճերի լուծումը:

³⁰ Տե՛ս www.parliament.am կայքի հղումը:

³¹ Տե՛ս նույն տեղում:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, որտեղ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից ընդդատության հետ կապված վեճերի լուծման ընթացակարգը ներմուծվել է 2018 թվականից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում այն գործում է 1998 թվականից: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածն ամրագրում է, որ առաջին ատյանի դատարանների միջև ընդդատության մասին վեճերը լուծում է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահը:

20. Նախորդ կետում ներկայացված կարգավորումներից հետևում է, որ Վճռաբեկ դատարանի նախագահը, լինելով մի կողմից՝ կոլեգիալ կազմով գործերի քննություն իրականացնող Վճռաբեկ դատարանի դատավոր, մյուս կողմից՝ Վճռաբեկ դատարանի ներկայացուցչական և կազմակերպչական լիազորություններ իրականացնող սուբյեկտ, լուծում է նաև ինչպես ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների դատավորների միջև ընդդատության և ենթակայության վերաբերյալ վեճերը՝ փաստացի ստանձնելով դատավորների միջև վեճը հանգուցալուծող վերադաս դատական ատյանի դեր: Մինչդեռ, պետք է փաստել, որ այդպիսի լիազորությունը, որն իր բնույթով, ընդհանուր առմամբ, դատական համակարգի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված գործառնության զրկում է, դուրս է գտնվում Վճռաբեկ դատարանի նախագահի՝ որպես միմիայն Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեության ապահովման համար պատասխանատու սուբյեկտի իրավական կարգավիճակից: Ուստի, հարկ է արձանագրել, որ **նշված լիազորության նախատեսումը մինչև 2015 թվականի Սահմանադրական փոփոխությունները ձևավորված՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի իրավական կարգավիճակի ընկալման արդյունք է, որն անհամատեղելի է Սահմանադրական փոփոխությունների հիմքում այս առումով ընկած գաղափարախոսության և դրան համահունչ՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում նախատեսված կարգավորումների հետ՝ հանգեցնելով նաև Վճռաբեկ դատարանի նախագահի՝ «գործառնության-ինստիտուտ-իրավասություն» եռամիասնության շղթայի ներդաշնակության խախտմանը: Ավելին, նշված լիազորության իրականացումը չի համապատասխանում նաև դատարանի նախագահի իրավական կարգավիճակի վերաբերյալ Կիևյան հանձնարարականներում, Եվրոպայի խորհրդի Նախարարների**

կոմիտեի, Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումներում ամրագրված չափանիշներին: Բացի այդ, «*ejusdem generis*» կոնտեքստուալ իրավամեկնաբանման հնարքի կիրառմամբ, նշված լիազորությունն ուղղակիորեն չի համապատասխանում նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով Վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված մյուս լիազորությունների ընդհանուր հատկանիշներին, որոնք դրսևորվում են Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունների՝ բացառապես ներկայացուցչական և կազմակերպչական բնույթով:

21. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո հարկ է նկատել, որ ընդդատության և ենթակայության մասին վեճերը լուծելիս Վճռաբեկ դատարանի նախագահը փաստացի հանդես է գալիս դատավորների միջև առկա վեճը լուծող վերադաս դատական ատյան, որի կողմից որոշվում է գործի քննությունն իրականացնող «իրավասու դատարանը»: Այլ կերպ, Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից որոշվում է անձի՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանը: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանի նախագահը, իր այս լիազորությունը գործադրելիս, ի պաշտոնե հանդես է գալիս որպես վերադաս դատական ատյան, որի կողմից այդ առումով համապատասխան որոշման կայացումը պարունակում է արդարադատության իրականացման տարրեր: Մինչդեռ, հարկ է արձանագրել, որ ՀՀ Սահմանադրության 162-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները, իսկ 163-րդ հոդվածում նշված դատարանների ցանկը սպառնիչ է և չի պարունակում նշում՝ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից միանձնյա կարգով որպես դատարան հանդես գալու հնարավորության մասին: Ավելին, պետք է նկատել, որ Վճռաբեկ դատարանի նախագահը չի համարվում սահմանադրական ինքնուրույն մարմին՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հանդես է գալիս որպես միմիայն կոլեգիալ կազմով գործող Վճռաբեկ դատարանի դատավոր: Ուստի, Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից արդարադատության իրականացման տարրեր պարունակող ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման ու անձի արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարանը» որոշելու լիազորությունը ողջամտորեն հակադրվում է ՀՀ Սահմանադրությամբ

լիազորված՝ արդարադատություն իրականացնելու գործառույթ կրող սահմանադրական մարմինների շրջանակն ամրագրող դրույթներին:

22. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ գտնում են, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով և «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գործերի ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման լիազորությունը չի բխում Վճռաբեկ դատարանի նախագահի՝ որպես Վճռաբեկ դատարանի ներկայացուցչական և կազմակերպչական բնույթի լիազորություններով օժտված սուբյեկտի իրավական կարգավիճակից և վտանգում է բացառապես ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դատարանների կողմից արդարադատության գործառույթ իրականացնելու պահանջը:

23. Սույն գործերի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- թիվ ԼԴ/1385/02/19 գործը Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մարտի 26-ի որոշմամբ ըստ ընդդատության (ենթակայության) ուղարկվել է ՀՀ սնանկության դատարան: Մնանկության դատարանը 2021 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ քաղաքացիական գործի ընդդատության (ենթակայության) վեճը լուծելու խնդրանքով³²,

- թիվ ԱՐԱԴ/0327/02/21 գործն Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի մարտի 25-ի որոշմամբ ըստ ընդդատության ուղարկվել է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ գործի ընդդատության (ենթակայության) հետ կապված վեճը լուծելու խնդրանքով³³,

- թիվ ՎԴ/3316/05/20 գործը ՀՀ վարչական դատարանի՝ 2021 թվականի մարտի 24-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանին: Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ ենթակայության հետ կապված վեճը լուծելու խնդրանքով³⁴:

³² Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

³³ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

³⁴ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

24. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-22-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, միջազգային չափանիշների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ գտնում եմ, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից վերոնշյալ դատարանների միջև գործերի ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծմամբ այդ գործերով քննությունն իրականացնող «իրավասու դատարանի» և ըստ այդմ՝ նաև շահագրգիռ անձանց՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի որոշումը չի բխի Վճռաբեկ դատարանի նախագահի իրավական կարգավիճակից: Ավելին, տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը հանդես կգա որպես այդ դատարանների միջև բարձրացված ընդդատության և ենթակայության մասին վեճերը հանգուցալուծող վերադաս դատական ատյան՝ այն դեպքում, երբ Վճռաբեկ դատարանի նախագահը ներառված չէ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դատարանների ցանկում:

Բ. Արդար դատաքննության իրավունքի երաշխիքների պաշտպանությունն ու դատական մարմինների միջև գործառութային կապի ապահովումը Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման ընթացակարգի պայմաններում.

25. Սույն գործով Սահմանադրական դատարանի առջև բարձրացվող *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով և «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գործերի ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման լիազորությունն արդյո՞ք չի խախտում դատական մարմինների միջև գործառութային կապը և վտանգում անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության, արդար դատաքննության սահմանադրական հիմնարար իրավունքներն ու վերջինիս բաղկացուցիչ մասը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի կողմից գործը քննության առնելու երաշխիքը:

26. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք*»:

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական արյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է:

2. Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միարեսակ կիրառությունը.

2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները»:

ՀՀ Սահմանադրության 172-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաքննիչ դատարաններն առաջին արյանի դատարանների դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող դատական արյան են»:

26.1. Արդար դատաքննության իրավունքի համատեքստում Սահմանադրական դատարանը, ի թիվս այլնի, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից [2005 թվականի խմբագրությամբ] Սահմանադրության 18-րդ հոդվածի [իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորում] նպատակն իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է³⁵,

- Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ **առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:**

³⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի հունվարի 16-ի թիվ ՍԴՌ-673 որոշումը, կետ 8:

Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ:

Մյուս կողմից, դատական իշխանությունը միակ իշխանությունն է, որն ինքն է ունակ և պարտավոր վերահսկելու իրեն, այսինքն՝ **վերադաս ատյանների դատարանները պարտավոր են վերացնել ավելի ստորին ատյանների թույլ տված դատական սխալները:** Սակայն իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ատյանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ **այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության**³⁶,

- Սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է (դատական բողոքարկումը): Վերջինս նաև անձի իրավունքների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականությունն է՝ **որոշակի ընթացակարգի, այդ թվում՝ դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործումը:** Այդպիսի ընթացակարգեր ՀՀ գործող

³⁶ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՍԴՈ-719 որոշումը, կետ 6:

օրենսդրությամբ նախատեսված են ինչպես քրեական, քաղաքացիական, այնպես էլ վարչական գործերով արդարադատության բնագավառներում³⁷:

27. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»*:

27.1. Արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ի թիվս այլնի, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- Հրապարակային լսումները դատավարության մասնակիցներին պաշտպանում են արդարադատության գաղտնի՝ առանց հանրության կողմից հսկողության իրականացումից: Արդարադատության իրականացումը տեսանելի դարձնելը նպաստում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նպատակի իրագործմանը, այսինքն՝ արդար դատաքննության իրականացմանը³⁸,

- Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի օրենքի գերակայության լույսի ներքո, որով պահանջվում է, որ դատավարության մասնակիցներն ունենան դատական պաշտպանության արդյունավետ միջոցներ, որոնք նրանց թույլ կտան պաշտպանել իրենց քաղաքացիական իրավունքները³⁹,

- Յուրաքանչյուր ոք ունի իր «քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների» հետ կապված ցանկացած պահանջ դատարանում կամ տրիբունալում ներկայացնելու իրավունք: Այդպիսով, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը ներառում է «դատարանի իրավունքը», որում մատչելիության իրավունքը,

³⁷ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՍԴՌ-936 որոշումը, կետ 5:

³⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Diennet v. France* գործով 1995 թվականի սեպտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 18160/91, կետ 33:

³⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Beles and others v. The Czech Republic* գործով 2002 թվականի նոյեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 47273/99, կետ 49:

այսինքն՝ դատարանում քաղաքացիական գործով վարույթ հարուցելու իրավունքը, դրա մի մասն է⁴⁰:

27.2. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ի թիվս այլնի, դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորվում է ներպետական մակարդակով իրավական պաշտպանության միջոցի հասանելիությունը՝ կոնվենցիայով նախատեսված իրավունքներն ու ազատություններն ապահովելու նպատակով՝ անկախ այն բանից, թե ինչ եղանակով են դրանք երաշխավորվում: Հետևաբար այդ դրույթի նպատակն է պահանջել տրամադրել կոնվենցիային համապատասխան իրավական պաշտպանության ներպետական միջոց՝ «փաստարկելի բողոքի» էության հետ գործ ունենալու համար, և տրամադրել դատական պաշտպանության արդյունավետ միջոց: Պայմանավորվող պետությունների՝ 13-րդ հոդվածին համապատասխան պարտավորությունների շրջանակը փոփոխվում է՝ դիմումատուի բողոքի բնույթից կախված: Այնուամենայնիվ, 13-րդ հոդվածով պահանջվող իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի «արդյունավետ» ինչպես գործնականում, այնպես էլ օրենսդրության շրջանակում: 13-րդ հոդվածի իմաստով «իրավական պաշտպանության միջոցի» «արդյունավետությունը» չի ենթադրում դիմումատուի համար, անկասկած, դրական արդյունք: Ինչպես նաև չի ենթադրում, որ այդ դրույթում նշված «պետական մարմիններ»-ը լինեն դատական մարմիններ, սակայն եթե դրանք դատական մարմիններ չեն, ապա դրանց իրավասությունները և դրանց կողմից ապահովվող երաշխիքները վերաբերելի են նրանց կողմից տրամադրվող իրավական պաշտպանության միջոցների արդյունավետությունը որոշելիս: Բացի այդ, նույնիսկ եթե մեկ իրավական պաշտպանության միջոցն ինքնին չի համապատասխանում 13-րդ հոդվածի պահանջներին, ներպետական օրենսդրությամբ նախատեսված իրավական պաշտպանության միջոցների ամբողջությունը կարող է ապահովել դա⁴¹:

28. Սույն որոշման 27-27.2.-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո նախնառաջ պետք է փաստել, որ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից ընդդատության կամ ենթակայության մասին վեճի լուծումն

⁴⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Golder v. The United Kingdom* գործով 1975 թվականի փետրվարի 21-ի վճիռը, գանգատ թիվ 4451/70, կետ 36:

⁴¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Khlaifia and Others v. Italy* [GC] գործով 2016 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 16483/12, կետ 268:

իրականացվում է միանձնյա կարգով՝ առանց երաշխավորելու քաղաքացիական կամ վարչական գործով շահագրգիռ անձանց՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող՝ լսված լինելու իրավունքը՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող մյուս տարրի՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի որոշման շրջանակներում: Այս առումով, սահմանված ընթացակարգերի պայմաններում, քաղաքացիական կամ վարչական գործով շահագրգիռ անձինք հնարավորություն չունեն դիրքորոշում ներկայացնել՝ իրենց իրավունքներին և օրինական շահերին ուղղակիորեն առնչվող գործի քննությունն իրականացնող դատարանը որոշելու հարցի վերաբերյալ:

Բացի այդ, հարկ է ընդգծել, որ ընդդատության կամ ենթակայության մասին վեճի լուծման շրջանակներում Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից որոշված դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ համարվում է «իրավասու դատարան», ինչը, Վճռաբեկ դատարանի նախագահի որոշման իրավաչափությունը վիճարկելու և անմիջականորեն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքից օգտվելու ընթացակարգի բացակայության պայմաններում, *prima facie* խնդրահարույց է դարձնում հետագայում՝ առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումը բողոքարկելիս նաև գործի ընդդատության կամ ենթակայության հարցի բարձրացումը վերադաս դատական ատյաններում: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով տրված ձևակերպումից հետևում է, որ ընդդատության կամ ենթակայության մասին վեճի լուծման արդյունքում Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից կայացվող որոշումը վերջնական է և շահագրգիռ անձինք այլևս հնարավորություն չեն ունենալու վիճարկել գործի քննությունն իրականացրած դատարանի պատշաճությունը:

Միաժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից կոնկրետ գործով ընդդատության կամ ենթակայության մասին վեճի լուծումից հետո գործի քննությունն իրականացրած դատարանի պատշաճությունը հետագայում՝ վերջնական դատական ակտի հետ միասին վիճարկելու հնարավորությունը՝ ընթացակարգային առումով դառնում է խնդրահարույց, քանի որ *prima facie* վտանգվում է դատական մարմինների միջև գործառնության կապի ապահովման սկզբունքը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից որոշված առաջին

ատյանի դատարանի կողմից քաղաքացիական կամ վարչական գործի քննությունն իրականացնելուց հետո, շահագրգիռ անձանց կողմից այդ դատարանի՝ «օրենքի հիման վրա ստեղծված» լինելը վերաքննիչ ատյանում վիճարկելու դեպքում կստացվի այնպես, որ վերաքննիչ դատարանն ըստ էության պետք է վերանայի Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից կայացված որոշման իրավաչափությունը: Մինչդեռ, ՀՀ Սահմանադրության 172-րդ հոդվածի ուժով, վերաքննիչ դատարանները լիազորված են վերանայելու բացառապես առաջին ատյանի դատարանների դատական ակտերի իրավաչափությունը:

Ավելին, բարձրացված խնդիրն առավել ակնառու ձևով կարող է արտահայտվել Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից որոշված՝ գործի ընդդատության կամ ենթակայության իրավաչափությունը Վճռաբեկ դատարանի՝ ՀՀ Սահմանադրության 172-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված գործառույթի շրջանակներում Վճռաբեկ դատարան բողոքարկելու դեպքում: Հարց է առաջանում, արդյո՞ք այդ դեպքում առկա չի լինի Վճռաբեկ դատարանի նախագահի մասնակցությունն այդ գործի քննությանը բացառող հանգամանք և նույնիսկ այդ դեպքում, անկողմնակալ դիտորդի տեսանկյունից, Վճռաբեկ դատարանում այդ հարցի քննարկումն արդյո՞ք կհամապատասխանի արդար դատաքննության իրավունքի պաշտպանության երաշխիքներին:

29. Սույն որոշման 28-րդ կետում նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո պետք է փաստել, որ առանց արդար դատաքննության իրավունքի երաշխիքների ապահովման ընթացակարգի, Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից քաղաքացիական կամ վարչական գործի ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծմամբ «իրավասու դատարանի» որոշման կառուցակարգը խնդրահարույց է: Ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման միակ ընդունելի ճանապարհը պետք է լինի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կամ մասնագիտացված դատարանի կայացրած վերջնական որոշման շրջանակներում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի հայցման եղանակով՝ գործի պատշաճ ընդդատության կամ ենթակայության հարցի վիճարկումը վերադաս դատական ատյաններում ⁴²: Այլ կերպ,

⁴² Այս առումով պետք է նաև նկատի ունենալ, որ ընդդատության կանոնների խախտումը դատավարական օրենքի էական խախտում է և դատական ակտի անվերապահ բեկանման հիմք: Այս առումով հարկ է նաև հիշատակել

շահագրգիռ անձանց հիմնարար իրավունքների երաշխավորման նկատառումներով պետք է հրաժարվել ընդդատության կամ ենթակայության վեճերի նախաձեռնման ընթացակարգից, որն ի սկզբանե նաև բացակայել է քաղաքացիական դատավարությունում, և որի պայմաններում, տասնամյակներ շարունակ, ընդդատության և ենթակայության վեճերը լուծվել են վերադաս դատական ատյաններում այդ հարցերը բարձրացնելու ընթացակարգով: Պետք է փաստել, որ **անընդունելի է այն մոտեցումը, երբ անձն իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով հայց է ներկայացնում դատարան, իսկ դատարանները լինելով արդարադատություն իրականացնելու գործառույթը կրող միակ պետական իրավասու մարմինները, այն քննության առնելու փոխարեն, նախաձեռնում են ընդդատության կամ ենթակայության վեճեր՝ այդ կերպ նաև վտանգելով դատարանից իրավական պաշտպանություն հայցող անձի արդար դատաքննության իրավունքը:**

30. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո պետք է նկատի ունենալ, որ «իրավասու դատարանի» կամ նույն՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի երաշխիքի հետ անմիջականորեն առնչվում է նաև ինքնաբացարկի ինստիտուտը, որը կոչված է արդարադատության բնագավառում երաշխավորելու օբյեկտիվ և անաչառ որոշումների կայացումը՝ ինչպես ընթացակարգային (դատավարական), այնպես էլ նյութական իրավահարաբերություններ կարգավորելիս, և կոչված է երաշխավորելու դատական իշխանության անկախությունը, արդարադատության արդյունավետությունը, անկողմնակալությունը: Սակայն, ինքնաբացարկ հայտնելու առերևույթ հիմքերի առկայության դեպքում ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշումը ենթակա է վիճարկման միմիայն ըստ էության գործով կայացված վերջնական դատական ակտի բողոքարկման շրջանակներում: Մասնավորապես, ինչպես նշել է Սահմանադրական դատարանը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ինքնաբացարկի վերաբերյալ կայացված որոշման բողոքարկման հնարավորության բացակայությունը և, միաժամանակ՝ ՀՀ դատական օրենսգրքում դատավորի ինքնաբացարկի որոշման

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի՝ Մ.Էլոյանի և մյուսների վերաբերյալ թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, որի շրջանակներում քննարկման առարկա դարձնելով քրեական գործի՝ հետաձգված կարգով բողոքարկված պատշաճ ընդդատության հարցը՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը գտել է, որ քրեական գործի քննությունը չի իրականացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընդդատության կանոնների պահպանմամբ, ստորադաս դատարաններն անտեսել են տարածքային հատկանիշներով քրեական գործի ընդդատության որոշման կանոնները, չեն պարզել, թե որ դատարանին է ընդդատյա գործը:

բողոքարկման իրավունքի առկայությունն իրավակիրառ պրակտիկայում չեն կարող մեկնաբանվել այնպես, որ բացառվի այդպիսի որոշումների վիճարկման իրավունքը՝ ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու դեպքում՝ ըստ էության գործով կայացված դատական ակտի բողոքարկման շրջանակներում: **Այս առումով Սահմանադրական դատարանն ընդգծել է նաև, որ որպես կանոն, օրենսդրական կարգավորման պրակտիկայում գերապատվությունը տրվում է ոչ թե ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման անմիջական բողոքարկմանը, որը լուրջ վտանգ կարող է ներկայացնել գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքի իրացման հարցում, այլ, այսպես կոչված, «հետաձգված բողոքարկմանը»՝ գործով կայացրած որոշման բողոքարկման շրջանակներում դրա քննությանը, որը նույնպես ապահովում է դատարանի իրավագործության երաշխավորման հարցում կողմերի իրավունքների իրացումը⁴³:** Նշվածը նաև համապատասխանում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Քաղաքացիական և տնտեսական գործերով բողոքարկման համակարգերի և ընթացակարգերի ու դրանց գործառնության կատարելագործման մասին» թիվ R 95 (5) հանձնարարականի դրույթներին⁴⁴:

Նկատի ունենալով, որ ընդդատության և ենթակայության լուծման հետ կապված հարցերն «իրավասու դատարանը» որոշելու դեպքում նույնաբնույթ են ինքնաբացարկի հարցը քննարկելիս «իրավասու դատարանի» որոշման հարցի հետ, քանի որ առնչվում են նույն՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի երաշխիքի պաշտպանության հետ, դատարանի պատշաճ ընդդատության և ենթակայության վերաբերյալ հարցերը ևս պետք է քննարկման առարկա դարձվեն ըստ էության գործով կայացվող վերջնական դատական ակտի բողոքարկման շրջանակներում: Այս առումով հատկապես կարևոր է ընդգծել, որ **ինչպես նշել է Սահմանադրական դատարանը, միջազգային իրավակիրառ պրակտիկայում զարգանում է այն միտումը, համաձայն որի՝ առկա է միջանկյալ դատական ակտերի անմիջական բողոքարկման հնարավորությունը նվազագույնի**

⁴³ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ ՍԴՈ-918 որոշումը, 6-րդ կետ:

⁴⁴ Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Քաղաքացիական և տնտեսական գործերով բողոքարկման համակարգերի և ընթացակարգերի ու դրանց գործառնության կատարելագործման մասին» 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R 95 (5) հանձնարարականը, հոդված 3:

հասցնելու և դրանց «հետաձգված բողոքարկման» կարգին նախապատվություն տալու ընդհանուր միտում⁴⁵:

31. Վերոնշյալի առումով միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է այն մասին, որ մի շարք երկրներում ընդդատության և ենթակայության մասին վեճերի նախաձեռնումն արգելված է օրենքի ուժով (*ex lege*) կամ այդպիսի ընթացակարգ առհասարակ նախատեսված չէ: Մասնավորապես, այդպիսի մոտեցում է որդեգրված, ի թիվս այլ երկրների՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական⁴⁶ և քրեական դատավարության օրենսգրքերում⁴⁷, Լատվիայի Հանրապետության քաղաքացիական⁴⁸ և քրեական դատավարության օրենսգրքերում⁴⁹, Ուկրաինայի Հանրապետության քաղաքացիական⁵⁰ և քրեական դատավարության օրենսգրքերում⁵¹:

32. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, կարծում եմ, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով և «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ գործերի ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված լիազորությունը խախտում է դատական մարմինների միջև գործառության կապը և վտանգում է անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության, արդար դատաքնության սահմանադրական հիմնարար իրավունքներն ու վերջինիս բաղկացուցիչ մասը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի կողմից գործը քննության առնելու երաշխիքը:

33. Սույն որոշմամբ մեջբերված գործերի փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 26-31-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, միջազգային չափանիշների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ գտնում եմ, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից սույն որոշման 23-րդ կետում նշված դատարանների միջև գործերի ընդդատության և ենթակայության մասին վեճերի

⁴⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 24-ի թիվ ՍԴՌ-1191 որոշումը, կետ 8:

⁴⁶ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածը:

⁴⁷ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 36-րդ հոդվածը:

⁴⁸ Տե՛ս Լատվիայի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածը:

⁴⁹ Տե՛ս Լատվիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 446-րդ հոդվածը:

⁵⁰ Տե՛ս Ուկրաինայի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածը:

⁵¹ Տե՛ս Ուկրաինայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 34-րդ հոդվածը:

լուծմամբ «իրավասու դատարանի» որոշումը կվտանգի այդ գործերով շահարգիտ անձանց՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքները:

Գ. Դատավորի մասնագիտացման սկզբունքի ապահովումը Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման լիազորության համատեքստում.

34. Սույն գործով Սահմանադրական դատարանի առջև բարձրացվող *երրորդ* իրավական հարցը հետևյալն է. Վճռաբեկ դատարանի նախագահի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ գործերի ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման լիազորությունն արդյո՞ք չի խախտում ըստ համապատասխան մասնագիտացման դատավորի կողմից գործի քննությունն իրականացնելու սկզբունքը և ըստ այդմ՝ նաև անձի՝ արդար դատաքննության սահմանադրական հիմնարար իրավունքը:

35. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

36. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատավորների միջև գործերը բաշխվում (...) են մասնագիտացման սկզբունքի (...) հիման վրա՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով»:*

37. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված «դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» թիվ R(94)12 հանձնարարականի՝ «Դատավորների անկախության ընդհանուր սկզբունքները» մասի 2-րդ կետի «c» ենթակետի համաձայն՝ *«Դատավորների պրոֆեսիոնալ մասնագիտացմանը վերաբերող բոլոր որոշումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ չափանիշների վրա, դատավորների ընտրությունը և մասնագիտացումը պետք է հիմնված լինի այն հատկանիշի վրա, որը կապված է որակավորման, ազնվության, ունակության և արդյունավետության հետ»⁵²:*

⁵² Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված «դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» 1994 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ R(94)12 հանձնարարականը:

38. Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ «Դատավորների մասնագիտացման մասին» թիվ 15 (2012) կարծիքի համաձայն՝ մասնագիտացումը հաճախ առաջանում է իրավունքի ոլորտում փոփոխություններին համապատասխանելու անհրաժեշտությունից և ոչ թե միտումնավոր ընտրության արդյունք է: Նոր օրենսդրական ակտերի մշտական ընդունումը, լինի դա միջազգային, եվրոպական թե ներպետական իրավունքի ոլորտներում, կամ փոփոխվող նախադեպը և տեսությունը իրավական գիտությունը դարձնում են չափազանց ընդգրկուն և բարդ: Դատավորի համար դժվար է տիրապետել բոլոր այդ ոլորտներին: Մինչդեռ հասարակությունը և դատավարության կողմերն ավելի ու ավելի մեծ պահանջներ են առաջադրում դատարանների պրոֆեսիոնալիզմի և արդյունավետության առումներով: Դատավորների մասնագիտացումը կարող է ապահովել, որ նրանք տիրապետեն համապատասխան գիտելիքների և փորձառության իրենց իրավասության ոլորտում⁵³:

39. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ բացառապես արհեստավարժ դատավորներից կազմված ներպետական դատարանները, ի տարբերություն երդվյալ ատենակալների, ունեն համարժեք փորձառություն և մասնագիտական կրթություն, որպեսզի կարողանան դիմադրել արտաքին ցանկացած ազդեցության⁵⁴:

40. Սույն որոշման 35-39-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների հիման վրա պետք է փաստել, որ դատավորների մասնագիտացման սկզբունքն ունի առանցքային նշանակություն՝ որակյալ արդարադատության ապահովման գործում: Մասնավորապես, ըստ իրավունքի ճյուղերի՝ համապատասխան մասնագիտական պատրաստվածության ապահովումը նպաստում է դատավորի հմտությունների զարգացմանը՝ բարձրացնելով այդ իրավունքի ճյուղի շրջանակներում արդարադատության իրականացման արդյունավետության աստիճանը: Պարբերաբեր ոլորտում նոր օրենսդրական ակտերի ընդունմանը հետևելու, ներպետական և միջազգային նախադեպային իրավունքին ծանոթանալու, գիտագործնական հմտությունները կատարելագործելու նկատառումներով դատավորներին առնվազն ըստ իրավունքի ճյուղերի

⁵³ Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ «Դատավորների մասնագիտացման մասին» թիվ 15 (2012) կարծիքը, կետ 8:

⁵⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mircea v. Romania* գործով 2007 թվականի մարտի 29-ի վճիռը, գանգատ թիվ 41250/02, կետ 75:

մասնագիտացման տարբերակելու անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում վաղուց դարձել է հրամայական և ներառվել դատաիրավական բարեփոխումների զարգացման օրակարգում: Այսպես, եթե մինչև 2009 թվականը Հայաստանի Հանրապետությունում բոլոր դատավորները քննում էին ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեական գործեր, ապա 2009 թվականից սկսած՝ ինչպես դատավորների թեկնածուների ընդունելությունը, այնպես էլ գործող դատավորների կողմից գործերի քննությունն իրականացվում է ըստ համապատասխան մասնագիտացման: Ավելին, եթե մինչև 2018 թվականը, ելնելով քրեական դատավարությունում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերի քանակից, քաղաքացիական գործեր քննող դատավորները ևս իրականացնում էին այդ գործերի քննությունը, ապա 2018 թվականից նշված գործերը քննում են բացառապես քրեական մասնագիտացում ունեցող դատավորները: Ավելին, 2018 թվականին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում ներդրված լուծումներով ըստ մասնագիտացման գործերի քննության իրականացումն ամրագրվել է որպես սկզբունք՝ նշելով, որ դատավորների միջև գործերը բաշխվում են մասնագիտացման սկզբունքի հիման վրա:

41. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո հարկ է նկատել, որ թեև ներկայումս գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում Հայաստանի Հանրապետության բոլոր դատավորները գործերը քննության են առնում ըստ իրենց մասնագիտացման սկզբունքի, սակայն Վճռաբեկ դատարանի նախագահը՝ լինելով այս կամ այն մասնագիտացմամբ (կամ քրեական, կամ քաղաքացիական և վարչական) պալատի դատավոր, ընդդատության և ենթակայության մասին վեճերը լուծում է ի հակադրումն նշված սկզբունքի: **Մասնավորապես, սահմանադրաիրավական վեճի առարկա իրավակարգավորումներից հետևում է, որ անկախ Վճռաբեկ դատարանի նախագահի մասնագիտացումից, վերջինս ունի ունիվերսալ իրավասություն և լիազորված է լուծելու քաղաքացիական, քրեական և վարչական գործերով ընդդատության և ենթակայության հետ կապված վեճերը: Մինչդեռ, նշված մոտեցումն ընդունելի լինել չի կարող և վտանգում է անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, հատկապես այն դեպքում, երբ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից կոնկրետ գործով որոշված դատարանը համարվում է «իրավասու դատարան»:**

42. Ընդդատության և ենթակայության վեճերի նախաձեռնման վերջին տարիների վիճակագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս հետևյալ պատկերը.

	2018	2019	2020	2021
Քաղաքացիական և վարչական գործերով	1	16	71	4
Քրեական գործերով	4	5	8	2

Վերոնշյալից պարզ է դառնում, որ պայմանավորված նոր օրենսդրական կարգավորումների ընդունմամբ, որոնցով էապես ընդարձակվել է այն գործերի շրջանակը, որոնցով նախատեսված է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ ընդդատության և ենթակայության մասին վեճերով դիմելու հնարավորությունը, վերջին տարվա ընթացքում շեշտակիորեն աճել է Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացվող վեճերի թիվը, ընդ որում՝ հատկապես քաղաքացիական գործերով:

43. Վերոգրյալի հաշվառմամբ պետք է փաստել, որ պայմանավորված ընդդատության և ենթակայության տեսակներով, հատկանիշներով (առարկայական, տարածքային (*forum delicti commissi*), սուբյեկտային, այլընտրանքային, ըստ գործերի փոխկապվածության (*forum connexitatis*)), դրանց հարաբերակցությամբ՝ իրավունքի կոնկրետ ճյուղին բնորոշ առանձնահատկություններով, գործերի ընդդատության և ենթակայության որոշումը պահանջում է համապատասխան ոլորտի նեղ մասնագիտացում: Այս համատեքստում պետք է նկատի ունենալ նաև ընդդատության և ենթակայության ինստիտուտների առանցքային նշանակությունն այն առումով, որ դրանց հիման վրա է որոշվում, թե որ դատարանն է «օրենքի հիման վրա ստեղծված», ուստի և իրավասու քննել դատական պաշտպանություն հայցող անձի գործը: Մինչդեռ, համապատասխան նեղ մասնագիտացման բացակայության պայմաններում, գործը քննության առնելու իրավասու դատարանի և ըստ այդմ՝ նաև «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի ոչ ճիշտ որոշումը կարող է հանգեցնել դատական սխալների՝ վտանգի տակ դնելով անձի՝ արդար դատաքննության սահմանադրական հիմնարար իրավունքը:

44. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, պետք է փաստել, որ Վճռաբեկ դատարանի նախագահի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ գործերի ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման լիազորությունը խախտում է ըստ համապատասխան մասնագիտացման դատավորի կողմից գործի քննությունն

ապահովելու սկզբունքը և ըստ այդմ՝ նաև անձի՝ արդար դատաքննության սահմանադրական հիմնարար իրավունքը:

45. Սույն որոշման 4-6-րդ կետերում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 35-44-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ ներկայացված գործերով ընդդատության և ենթակայության հետ կապված վեճերի լուծումը պահանջում է քաղաքացիական, սնանկության և վարչական ոլորտների նեղ մասնագիտացում: Նման պայմաններում, հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի նախագահի մասնագիտացումը, նրա կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով և «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ գործերի ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման լիազորությունը կխախտի ըստ համապատասխան մասնագիտացման դատավորի կողմից գործի քննությունն իրականացնելու սկզբունքը և ըստ այդմ՝ նաև շահագրգիռ անձանց՝ արդար դատաքննության սահմանադրական հիմնարար իրավունքը:

46. Այսպիսով, վերը ներկայացված պատճառաբանությունների հաշվառմամբ, Սահմանադրական դատարանին միջնորդում եմ որոշելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի և «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, 162-րդ, 163-րդ, 171-րդ, 172-րդ հոդվածներին համապատասխանության հարցը՝ հաշվի առնելով, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահն ինչպես առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների միջև ընդդատության և ենթակայության մասին վեճերը լուծելիս փաստացի հանդես է գալիս որպես վերադաս դատական ատյան, ինչն անհամատեղելի է իր կարգավիճակի և բացառապես ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դատարանների կողմից արդարադատության գործառույթ իրականացնելու պահանջի հետ, հանգեցնում է ըստ համապատասխան մասնագիտացման դատավորի կողմից գործի քննությունն իրականացնելու սկզբունքի, դատական մարմինների միջև գործառութային կապի խախտման՝ վտանգելով անձի դատական պաշտպանության, արդար դատաքննության սահմանադրական հիմնարար իրավունքներն ու վերջինիս

բաղկացուցիչ մասը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի կողմից գործը քննության առնելու երաշխիքը:

IV. Միջնորդություն՝ համակարգային առումով փոխկապակցված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ.

47. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ասրյանի դատարանների միջև ընդդատության մասին վեճերը լուծում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը»:*

48. Սահմանադրական դատարանի կողմից նախկինում կայացված որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ՝

- սահմանադրական արդարադատություն իրականացնելիս և սահմանադրաիրավական վեճը լուծելիս Սահմանադրական դատարանը ոչ միայն հետազոտում է վիճարկվող իրավական դրույթները, այլ նաև **դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ինչպես տվյալ ակտի այլ դրույթները, այնպես էլ այլ օրենքները և նորմատիվ իրավական ակտերը**⁵⁵,

- մի կողմից՝ նշված իրավադրույթների համակարգային հետազոտության, մյուս կողմից՝ իրավական անվտանգության համակարգային գնահատման արդյունքում Սահմանադրական դատարանն իր որոշումներում **անդրադառնում է արտահայտված իրավական դիրքորոշումների կիրառելիությանը նաև այլ օրենքներում**⁵⁶,

⁵⁵ Տե՛ս օրինակ՝ Սահմանադրական դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 2-ի թիվ ՍԴՌ-1142 որոշումը՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի մի շարք հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ, որը կայացնելիս Սահմանադրական դատարանը հետազոտել է **ինչպես վիճարկվող՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, այնպես էլ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքներն ու նորմատիվ իրավական ակտերը**: Բացի այդ, տե՛ս նաև Սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 17-ի թիվ ՍԴՌ-1236 որոշումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ, որը կայացնելիս Սահմանադրական դատարանն **անդրադարձել է նաև վեճի առարկա իրավակարգավորման հետ համակարգային առումով փոխկապակցված մի շարք այլ իրավական ակտերով կարգավորվող համանման հարաբերություններին**:

⁵⁶ Տե՛ս օրինակ՝ Սահմանադրական դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 2-ի թիվ ՍԴՌ-1142 որոշումը՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի մի շարք հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ, որտեղ Սահմանադրական դատարանը գտնելով, որ հակասող ճանաչված իրավադրույթները համակարգային առումով փոխկապակցված են Հայաստանի Հանրապետության

- ձևավորված կայուն իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում Սահմանադրական դատարանը քննության է առնում նաև վիճարկվող կարգավորման հետ **համակարգային կապի մեջ գտնվող, փոխկապակցված այլ նորմատիվ իրավական ակտերում պարունակվող կարգավորումների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության պահանջներին**⁵⁷:

49. Նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո պետք է փաստել, որ սահմանադրական արդարադատություն իրականացնելիս Սահմանադրական դատարանն իրավասու է գնահատել ինչպես վիճարկվող խնդրո առարկա ակտի իրավակարգավորումների, այնպես էլ դրանց հետ համակարգային կապի մեջ գտնվող այլ նորմատիվ իրավական ակտերում պարունակվող դրույթների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության պահանջներին: Համակարգային փոխկապակցվածությունը կարող է դրսևորվել ինչպես նույն, այնպես էլ տարբեր նորմատիվ իրավական ակտերում պարունակող կարգավորումների առարկայի՝ **նույնաբնույթ կամ համասեռ բնույթով**: Այս համատեքստում

շուրջ 50 օրենքներով և ութ տասնյակից ավելի այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված իրավակարգավորումների հետ, որոշել է, որ սահմանված ժամկետում ՀՀ Ազգային ժողովը և Կառավարությունը՝ իրենց իրավասության շրջանակներում «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի և դրա հետ **համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի իրավակարգավորումները պետք է համապատասխանեցնեն կայացված որոշման պահանջներին**: Համանման լուծում է տվել Սահմանադրական դատարանը նաև 2016 թվականի փետրվարի 23-ի թիվ ՍԴՈ-1256 որոշմամբ՝ գտնելով, որ վիճարկվող օրենքի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի իրավակարգավորումները պետք է համապատասխանեցվեն կայացված որոշման պահանջներին: Բացի այդ, տե՛ս նաև Սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 28-ի թիվ ՍԴՈ-1203 որոշումը, որտեղ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելիս Սահմանադրական դատարանը գտել է, որ այդ որոշման իրավական դիրքորոշումները **համակարգային ձևով իրենց իրացումը պետք է գտնեն ինչպես «Շահութահարկի մասին», այնպես էլ «Հարկերի մասին» ՀՀ օրենքներում**:

⁵⁷ Տե՛ս օրինակ՝ Սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 7-ի թիվ ՍԴՈ-1224 որոշումը՝ ««Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի և կից օրենքների, ինչպես նաև **դրանց հետ համակարգային կապի մեջ գտնվող այլ նորմատիվ իրավական ակտի՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 10-րդ հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ**:

Բացի այդ, տե՛ս նաև Սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի ապրիլի 14-ի թիվ ՍԴՈ-1522 որոշումը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 353.1-ին հոդվածի և **դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմատիվ իրավական ակտի՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ**:

կարևոր է պատշաճ ուշադրության արժանացնել վիճարկվող կարգավորումների միջև **ինստիտուցիոնալ և գործառնական կապի առկայությունը**, որն էլ կարող է դիտարկվել որպես խնդրո առարկա կարգավորումների համակարգային փոխկապակցվածության գնահատման հստակ չափորոշիչ:

50. Սույն որոշման շրջանակներում բարձրացված՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից ընդդատության և ենթակայության վեճերի լուծման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի սահմանադրականության վերաբերյալ վեճը համակարգային, այն է՝ ինստիտուցիոնալ և գործառնական կապի մեջ է գտնվում նույնաբնույթ կարգավորում պարունակող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի հետ: Մասնավորապես, ի համեմատություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի, որոնք վերաբերում են Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից քաղաքացիական, վարչական կամ սնանկության գործերով ընդդատության և ենթակայության հետ կապված վեճերի լուծմանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածը վերաբերում է Վճռաբեկ դատարանի նախագահի նույնաբնույթ լիազորությանը, այն է՝ քրեական գործերով ընդդատության հետ կապված վեճերի լուծմանը:

51. Նման պայմաններում, պետք է արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածը համակարգային առումով փոխկապակցված է սույն որոշման շրջանակներում վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի հետ, ուստի, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները վերաբերելի մասով (*mutatis mutandis*) նույնությամբ կիրառելի են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի նկատմամբ:

52. Վերոգրյալի հիման վրա, սույն որոշման 48-51-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, **Սահմանադրական դատարանին միջնորդում են որոշելու նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, 162-րդ, 163-րդ, 171-րդ, 172-րդ հոդվածներին**

համապատասխանության հարցը՝ հաշվի առնելով, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահը առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև ընդդատության մասին վեճերը լուծելիս փաստացի հանդես է գալիս որպես վերադաս դատական ատյան, ինչն անհամատեղելի է իր կարգավիճակի և բացառապես ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դատարանների կողմից արդարադատության գործառույթ իրականացնելու պահանջի հետ, հանգեցնում է դատական մարմինների միջև գործառույթային կապի խախտման՝ վտանգելով անձի դատական պաշտպանության, արդար դատաքնության սահմանադրական հիմնարար իրավունքներն ու վերջինիս բաղկացուցիչ մասը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի կողմից գործը քննության առնելու երաշխիքը:

V. Միջնորդություն՝ միջանկյալ միջոց կիրառելու և վիճարկվող նորմերի իրավական գործողությունը կասեցնելու վերաբերյալ.

53. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Գործը քննության ընդունելուց հետո Սահմանադրական դատարանը դիմող կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ մինչև գործի դատաքնության ավարտը կարող է կասեցնել այն իրավական ակտի կամ դրույթի գործողությունը, որի սահմանադրականությունը վիճարկվում է, եթե կասեցման մասին որոշում չընդունելը կարող է հանգեցնել անդադնալի կամ ծանր հետևանքների կողմերից մեկի կամ հանրության համար»:*

54. Սահմանադրական դատարանի կողմից միջանկյալ միջոց կիրառելու և վիճարկվող դրույթի իրավական գործողությունը կասեցնելու առնչությամբ Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ վիճարկվող նորմատիվ և/կամ անհատական ակտի կասեցումն անհրաժեշտ գործիք է անձանց անշրջելի հետևանքներից պաշտպանելու համար: Միաժամանակ, ըստ հանձնաժողովի՝ **կասեցման պայմանները չեն կարող չափազանց խիստ լինել**⁵⁸:

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված կարծիքում Վենետիկի

⁵⁸ St'u European Commision For Democracy Through Law (Venice Commision), Study on Individual Access to Constitutional Justice, Strasbourg, 27 January 2011, Study N° 538 / 2009, CDL-AD(2010)039rev, կետեր 139-140:

հանձնաժողովը նշել է, որ Սահմանադրական դատարանի համար կարևոր է այլ կողմերի շահերը և հանրային շահը հաշվի առնելը՝ մինչև իրավական ակտերի և նորմերի կասեցումը⁵⁹:

55. Նախորդ կետերում մեջբերված իրավադրույթի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո պետք է փաստել, որ սույն որոշմամբ վիճարկվող նորմերի իրավական գործողությունը կասեցնելու միջանկյալ միջոցի կիրառումը նպատակ է հետապնդում երաշխավորելու այդ կարգավորումներով շահագրգիռ անձանց՝ վտանգի տակ դրվող իրավունքների պաշտպանությունը: Մասնավորապես, միջանկյալ միջոցի կիրառմամբ կանխվում է շահագրգիռ անձանց իրավունքների հետագա խախտման հնարավորությունը՝ **բացառելով այդ անձանց շահերին անդառնալի վնասի պատճառումը կամ իրավունքների շարունակական խախտման ձևով արտահայտվող ծանր հետևանքների առաջացումը**: Հենց այդ պատճառով, անդառնալի վնաս պատճառող կամ ծանր հետևանքներ առաջացնող դրույթների/ակտերի իրավական գործողության կասեցման միջանկյալ միջոցի կիրառման լիազորությամբ օժտված են ինչպես միջազգային (օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ դատարանի կանոնակարգի 39-րդ հոդվածի կիրառմամբ), այնպես էլ ներպետական դատական ատյանները:

55.1. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի ուժով Սահմանադրական դատարանը ևս օժտված է այդպիսի միջանկյալ միջոց կիրառելու իրավասությամբ: Ընդ որում, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ այդպիսի որոշում կայացնելիս Սահմանադրական դատարանը հաշվի է առնում նաև սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող իրավակարգավորումների շարունակական գործողության պայմաններում **երկրում իրավական համակարգի կայունության և իրավական անվտանգության պատշաճ երաշխավորումը**:

56. Սույն որոշման 53-55.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթը և իրավական դիրքորոշումները համադրելով սույն որոշման 4-6-րդ կետերում մեջբերված գործերի փաստական հանգամանքների հետ՝ պարզ է դառնում, որ սույն որոշման պայմաններում, խնդրո առարկա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի, «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև դրանց հետ

⁵⁹ St'u European Commision For Democracy Through Law (Venice Commision), CDL-AD(2017)011-e Armenia – Opinion on the draft Constitutional Law on the Constitutional Court, adopted by the Venice Commission at its 111th Plenary Session (Venice, 16-17 June 2017), կետ 70:

համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի հետագա իրավական գործողությունը շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից կառաջացնի ծանր հետևանքներ, ինչպես նաև կվտանգի իրավական համակարգի կայունությունն ու իրավական անվտանգության պատշաճ երաշխավորումը:

Այսպես, մինչև Սահմանադրական դատարանում սույն դիմումի դատաքննության ավարտը, սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող կարգավորումների հետագա գործողության դեպքում կխախտվեն ինչպես սույն որոշմամբ նշված երեք գործերով, այնպես էլ այլ գործերով շահագրգիռ անձանց դատական պաշտպանության, արդար դատաքննության սահմանադրական հիմնարար իրավունքներն ու վերջինիս բաղկացուցիչ մասը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի կողմից գործը քննության առնելու երաշխիքը:

Մասնավորապես, մինչև Սահմանադրական դատարանում ներկայացվող դիմումի դատաքննության ավարտը, թիվ ԼԴ/1385/02/19, ԱԲԱԴ/0327/02/21 և ՎԴ/3461/05/20 գործերը քննության առնելու իրավասություն ունեցող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի որոշման անհնարինությունը, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից տվյալ գործերով վարույթները կասեցնելու իրավական հնարավորության բացակայությունը կխախտեն այդ գործերով շահագրգիռ անձանց դատական պաշտպանության, արդար դատաքննության սահմանադրական հիմնարար իրավունքներն այն դեպքում, երբ սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող կարգավորումները շարունակեն մնալ հետագա իրավական գործողության մեջ:

Բացի այդ, հաշվի առնելով ինչպես քաղաքացիական և վարչական, այնպես էլ քրեական գործերով ընդդատության և ենթակայության վերաբերյալ վեճերի բարձրացման հաճախականությունը՝ ողջամտորեն կանխատեսելի է, որ մինչև Սահմանադրական դատարանում սույն դիմումի դատաքննության ավարտը կրկին կարող են բարձրացվել ընդդատության կամ ենթակայության մասին վեճեր, որոնց լուծման անհնարինությունը՝ ուղղակիորեն կհանգեցնի այդ գործերով շահագրգիռ անձանց համար ծանր հետևանքների առաջացման՝ այդ անձանց դատական պաշտպանության, արդար դատաքննության սահմանադրական հիմնարար իրավունքների ու վերջինիս բաղկացուցիչ մասը կազմող՝

«օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի կողմից գործը քննության առնելու երաշխիքի խախտման ձևով:

57. Վերոգրյալի հաշվառմամբ, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև նկատի ունենալով, որ Սահմանադրական դատարանի առաքելությունն է՝ ապահովել Սահմանադրության գերակայությունն ու կայունությունը, երաշխավորել մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն ու անմիջական գործողությունը, **Սահմանադրական դատարանին միջնորդում են կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի, «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի իրավական գործողությունը՝ նկատի ունենալով, որ մինչև Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումի դատաքննության ավարտը, ինչպես սույն որոշման մեջ նշված գործերով, այնպես էլ այլ գործերով հնարավոր ընդդատության կամ ենթակայության վեճերի լուծման անհնարինությունը, մի կողմից՝ իրավական համակարգի կայունության և իրավական անվտանգության պատշաճ երաշխավորման, մյուս կողմից՝ անձանց դատական պաշտպանության, արդար դատաքննության սահմանադրական հիմնարար իրավունքների ու վերջինիս բաղկացուցիչ մասը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի կողմից գործը քննության առնելու երաշխիքի պաշտպանության առումով կհանգեցնի ծանր հետևանքների:**

VI. Միջնորդություն՝ գործի քննությունը հրատապության կարգով իրականացնելու վերաբերյալ.

58. Սույն որոշման 56-57-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ պետք է փաստել, որ բարձրացված խնդրո առարկա սահմանադրաիրավական վեճն ունի առանցքային նշանակություն և կիրառելի է ինչպես սույն որոշման մեջ նշված գործերով, այնպես էլ այն հնարավոր բոլոր քաղաքացիական, սնանկության, վարչական կամ քրեական գործերով, որոնց շրջանակներում կարող են բարձրացվել ընդդատության և ենթակայության մասին վեճեր: Ընդ որում, ինչպես արդեն նշվել է, այդպիսի վեճերի

բարձրացումն ուղղակիորեն կապակցված է անձանց դատական պաշտպանության, արդար դատաքննության սահմանադրական հիմնարար իրավունքների ու վերջինիս բաղկացուցիչ մասը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի կողմից գործը քննության առնելու երաշխիքի հետ:

58.1. Իրավական անվտանգության պատշաճ երաշխավորման, իրավական համակարգի կայունության ապահովման և լուրջ հետևանքների կանխման նկատառումներից ելնելով, միջազգային դատական մարմինների իրավակիրառ պրակտիկայում տարածված է գործերի քննությունը հրատապության կարգով իրականացնելու վերաբերյալ միջնորդությունների ներկայացումը: Այսպես, օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր կանոնակարգի 41-րդ հոդվածին համապատասխան իրավասու է դիմումը դիտարկել առաջնահերթության կարգով: Ընդ որում, այդպիսի հնարավորությունը կիրառելի է նաև Եվրոպական կոնվենցիայի 16-րդ արձանագրությամբ խորհրդատվական կարծիքներ ստանալու ընթացակարգի նկատմամբ, երբ օրինակ՝ առկա է Կոնվենցիոն իրավունքի խախտման վտանգ կամ Կոնվենցիոն համակարգի արդյունավետության, ընդհանուր հետաքրքրության կարևոր հարցադրում, որը կարող է լուրջ հետևանքներ ունենալ ներպետական իրավական համակարգերի նկատմամբ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննարկում է այն առաջնահերթության քաղաքականությանը համապատասխան⁶⁰ հրատապության կարգով⁶¹:

59. Վերոնշյալի հաշվառմամբ, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված՝ կողմի՝ Սահմանադրական դատարանում միջնորդություն ներկայացնելու իրավունքը՝ **միջնորդում եմ սույն որոշմամբ ներկայացվող դիմումի քննությանը տալ առաջնահերթություն՝ այն քննության առնելով հրատապության կարգով՝ ելնելով սույն որոշման կայացումից հետո՝ մինչև Սահմանադրական դատարանում գործի դատաքննության ավարտը, ընդդատության և ենթակայության վեճերի լուծման վերաբերյալ տեսական ժամանակով ձևավորվող իրավական**

⁶⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2009 թվականի հունիսին ընդունված՝ առաջնահերթության կարգով գործերի քննություն իրականացնելու քաղաքականությունը:

⁶¹ Տե՛ս «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի թիվ 16 արձանագրությամբ ներդրված՝ խորհրդատվական կարծիք տրամադրելու ընթացակարգի իրականացման վերաբերյալ ուղեցույցը, 2017 թվականի սեպտեմբերի 18, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, կետեր 29 և 30:

անորոշության հաղթահարման հրամայականից, շահագրգիռ անձանց դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների հնարավոր խախտումների կանխման անհրաժեշտությունից, ինչպես նաև իրավական անվտանգության պատշաճ երաշխավորման և իրավական համակարգի կայունության ապահովման կարևորությունից:

60. Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 23-րդ, 31-րդ և 71-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Դիմել ՀՀ Սահմանադրական դատարան՝ միջնորդելով որոշելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի, «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, 162-րդ, 163-րդ, 171-րդ, 172-րդ հոդվածներին համապատասխանության հարցը՝ հաշվի առնելով, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ինչպես առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների միջև ընդդատության և ենթակայության մասին վեճերը լուծելիս փաստացի հանդես է գալիս որպես վերադաս դատական ատյան, ինչն անհամատեղելի է իր կարգավիճակի և բացառապես ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դատարանների կողմից արդարադատության գործառույթ իրականացնելու պահանջի հետ, հանգեցնում է ըստ համապատասխան մասնագիտացման դատավորի կողմից գործի քննությունն իրականացնելու սկզբունքի, դատական մարմինների միջև գործառույթային կապի խախտման՝ վտանգելով անձի դատական պաշտպանության, արդար դատաքննության սահմանադրական հիմնարար իրավունքներն ու վերջինիս բաղկացուցիչ մասը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի կողմից գործը քննության առնելու երաշխիքը:

2. Միջնորդել կասեցնել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի, «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի իրավական գործողությունը՝ նկատի ունենալով, որ մինչև Սահմանադրական

դատարան ներկայացվող դիմումի դատաքննության ավարտը, ինչպես սույն որոշման մեջ նշված գործերով, այնպես էլ այլ գործերով հնարավոր ընդդատության և ենթակայության վեճերի լուծման անհնարինությունը, մի կողմից՝ իրավական համակարգի կայունության և իրավական անվտանգության պատշաճ երաշխավորման, մյուս կողմից՝ անձանց դատական պաշտպանության, արդար դատաքննության սահմանադրական հիմնարար իրավունքների ու վերջինիս բաղկացուցիչ մասը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի կողմից գործը քննության առնելու երաշխիքի պաշտպանության առումով կհանգեցնի ծանր հետևանքների:

3. Միջնորդել սույն որոշմամբ ներկայացվող դիմումի քննությանը տալ առաջնահերթություն՝ այն քննության առնելով հրատապության կարգով՝ ելնելով սույն որոշման կայացումից հետո՝ մինչև Սահմանադրական դատարանում գործի դատաքննության ավարտը, ընդդատության և ենթակայության վեճերի լուծման վերաբերյալ տևական ժամանակով ձևավորվող իրավական անորոշության հաղթահարման հրամայականից, շահագրգիռ անձանց դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների հնարավոր խախտումների կանխման անհրաժեշտությունից, ինչպես նաև իրավական անվտանգության պատշաճ երաշխավորման և իրավական համակարգի կայունության ապահովման կարևորությունից:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ

ՆԱԽԱԳԱՀ՝

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ